

բողոքի, և այն ատեն բոլոր քրիստոնէից վրայ պէտք էր գործադրել այդ դրութիւնը. ուստի ետ կեցան. Աստուծոյ միմէ Հայ չէին որ այսպէս խորհեցան ու այսպէս ըրին. — այո՛, Հայ էին, բայց Հայութենէ յուսահատ Հայեր էին. ուստի ուրիշ կողմ ուղղեցին իրենց կէտ նպատակին. մասնաւորութենէ ընդհանրութեան, Հայաստանի տէր ըլլալէ դադրելով՝ Տաճկաստանի տէր եղան, և իբրեւ Տաճկաստանի տէր անշուշտ մասնաւորութեանց մահը ուղեկու էին, մասն գի մէկ Հայրենիքը, ունենալու է մէկ լեզու, մէկ պատմութիւն, մէկ նպատակ, մէկ քաղաքականութիւն և մէկ պաշտօնէութիւն:

Եւ որն էր այս մէկը. — անշուշտ այս մէկն էր Օսմանեան Հայրենիքը, Օսմանեան լեզուն, Օսմանեան պատմութիւնը, Օսմանեան անկախութեան նպատակը, Օսմանեան քաղաքականութիւնը և Օսմանեան պաշտօնէութիւնը. ուստի այն որ մասնաւորութիւն էր, պէտք էր ջնջել և զամենքն ի մի ձուլել. Եւսկիւտարի ճեմարանը մասնաւորութիւն էր. Հիւանդանոցի դպրոցը մասնաւորութիւն էր, Շահ. Նուպար վարժարանը մասնաւորութիւն է, Հայոց լեզուն մասնաւորութիւն է, Հայոց պատմութիւնը մասնաւորութիւն է, Հայոց եկեղեցականաց ազգեցութիւնը մասնաւորութիւն է, Հայոց զբարաւ լեզուն մասնաւորութիւն է, աշխարհաբար մասնաւորութիւն է, ազգային լրագրութիւնը մասնաւորութիւն է. ասոնք քաջայրել, բոլոր այնմ քաղաքականութեան ընդհանուրին փնտսել է. մեծ սխալ — քաջայրել էր մասնաւորութիւնը, զորացուր զանի, այն ատեն զորաւոր մասնաւորներէ բաղկացեալ զորաւոր ընդհանրութիւն մը կունենաս. երբ կը դադրի հակառակութիւնը, այն ատեն կը հաստատուի միութիւնը. երբ կսկսի հակառակութիւնը, երբ կիմացուի լծնամութեան զաղտնի ոգին, այն ատեն կսկսի զաղտնի լծնամութեան ոգին, փոխադարձութեան օրէնքը կարելի չէ բռնաբարել. թող . . . լեզուն արգիլէ, ասով է որ . . . աց լեզուն սրբազան պիտի բռնուի. թող ազգային պատմութեան աւանդութիւնն արգիլէ, անով է որ՝ սրբազան պատմութեան կը դառնայ ազգային պատմութիւնը:

Այս դարը ազգութեան դար է. այս դարուն հասնող ազգը չէ կարելի մեռցնել մինչև որ ինքը չուզէ մեռնիլ.

Մենք ենք որ մեր ազգութիւնը մեռցնելու ճամբան ձեռք առած ենք. ո՞վ կրնայ ուրեմն արգիլել մեր անձնասպանութիւնը:

Այս է ահա մեր արդի վիճակը. կրօնքին՝ անտարրերութիւն:

Վեկեղեցական հագուստով՝ ազգութեան պաշտօնեաներուս՝ ազգեցութեանը լծնամութիւն:

Լեզուներնէս մէկուն դամբանականը գրել. միւսին խառնակութիւն տալ. ազգային պատմութեան մասնաւոր դասը դարբեցնել:

Ո՛ր գործերնուս մէջ դռները ազգութեան հիմնական նշանը. բայց տակաւին բացազանջութեամբ Հայ ենք:

Օրէնքի թ. 575. Փետր. 12

Մայրաքաղաքիս ռուսական ղեկավար Իկնաթիէ՛ք զօրապետը 50 օսմանեան ոսկի շնորհեց, ի նպատակ ազգային ազգատիկ վարժարանին Բերայի և յօրինակ այլոց:

Փետր. թ. 656:

ԲԱԺԱՆՈՒՄՆ Ի ԲԱԺԱՆՄԱՆ

Արեւելեան Վաթոյիկ ազգայինք ուրբաթ օրը քուէարկութեամբ երեք կաթողիկոսական ընտրելի որոշելով, շարաթ առաւօտ Բերայի Ոսկերեան եկեղեցւոյն մէջ գումարուած եկեղեցական ժողովուն՝ այն երեք ընտրելեաց մէջէն Պահտիարեան Յակոբ Գերապայծառը Վիլիկիոյ կաթողիկոս ընտրեց Պետրոս Թրդ անուամբ, և կիրակի առաւօտ ալ անունը յիշատակուիլ սկսաւ. Արեւելեան Վաթոյիկ Հայոց եկեղեցիներուն մէջ:

Իսկ Հասունեանք զարձեալ Վիլիկիոյ կաթողիկոս կը ծանաչեն զԳեր. Հասունեան, և զայն կը յիշատակեն:

Այսպէս ահա մեր Վաթոյիկ ազգայինք երկուքի բաժնուելով, մի և նոյն անգոյ ակթօին վրայ երկու կաթողիկոս կունենան իրարու հակաթօ, երկուքն ալ Պետրոս Թրդ անուամբ:

Մարտ. թ. 1051. Փետր. 16

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԳԻ

Փետր. 12 — Գեր. Մկրտիչ Ա. Եպիսկոպոս Բաբամեանց կարգեցաւ Փոխ. — Թեմակալ Վիճակին Լեւանայ:

,, 17 — Արժանապատիւ Ռաֆայէլ Վարդապետն նշանակեցաւ առժամանակեայ Վանահայր վանուցն Ս. Գեղարդայի տեղի Երթ. Միքայէլ Վարդապետի Չամոյեանց, որ գնաց յուխտ և յերկըրպազութիւն տնօրինական Ս. տեղեացն Բրիստոսի յէրուսաղէմ: